ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Դավթյան» ՍՊԸ -ի լիազորված ներկայացուցիչ՝

Վ. Պետրոսյանի (լիազորագիր տրված՝ 13.03.2019թ.)

Ա. Դավթյանի (լիազորագիր տրված՝ 13.03.2019թ.)

Քննելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Դավթյան» ՍՊԸ-ի կողմից 13.03.2019թ. ներկայացված և 14.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/33 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Դավթյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Դավթյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Դավթյան» ՍՊԸ-ն մասնակցելով թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին 12.02.2019թ. eauction համակարգից էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, որի համաձայն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից և որակավորման փաստաթղթեր ուղարկելու մասին ծանուցում:

Ընկերությունը հայտնել է, որ փորձ է արվել համակարգի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթեր, սակայն դա կատարել չի հաջողվել: Նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինությունը պարզելու նպատակով, միևնույն ժամանակ ենթադրելով, որ հնարավոր պատճառ կարող է հանդիսանալ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերի ծավալուն լինելը Ընկերության կողմից 15.02.2019թ. կամայական փոքրածավալ մի փաստաթուղթ է վերբեռնվել համակարգ: Համակարգը նշված փաստաթուղթը ընդունել է, սակայն փոփոխելու հնարավորություն չի տվել:

Ընկերությունը նշել է, որ համակարգի անաշխատության պատճառով Ընկերության կողմից սխալ են ներկայացվել պահանջվող որակավորման վերաբերյալ փաստաթղթերը և Ընկերությունը զանգահարել է էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Օրդուխանյանին /060474142/ հեռախոսահամարով և հայտնել կատարվածի մասին: Վերջինս հայտնել է, որ անհանգստանալու և այլ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ Ընկերությունը ունի նշված իրավիճակը շտկելու հնարավորություն:

19.02.2019թ. Համակարգի միջոցով Ընկերությունը ստացել է «Շտկման պահանջի» վերաբերյալ ծանուցում, սակայն հրավերի 8.16 կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտադիր պայմանի խախտումով, այն է ծանուցմանը կցված չի եղել հանձնաժողովի նիտի արձանագրության պատճեն, որում պարտադիր և մանրամասն պետք է

նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

19.02.2019թ. Ընկերության կողմից համակարգ է վերբեռնվել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որից հետո արձագանք չստանալով՝ 22.02.2019թ. Ընկերությունը զանգահարել է գնահատող հանձնաժողովի քարտուղարին և ներկայարել խնդիրը, իսկ վերջինս պատասխանել է, որ իրենք անհայտ պատճառով չեն կարողանում տեսնել այդ փաստաթղթերը և խնդրել է դրանք ուղարկել էլեկտրոնային փոստով:

Ընկերությունը հայտնել է, որ 26.02.2019թ. Օրդուխանյանի տիրապետության տակ գտնվող էլեկտրոնայի փոստի gnumner@cadasttre.am հասցեին երկրորդ անգամ է ներկայացրել որակավորման փաստաթղթերը:

01.03.2019թ. gnumner@cadasttre.am էլեկտրոնայի փոստից Ընկերության տնօրեն Ադամ Դավթյանի անձնական էլեկտրոնային հասցեով ստացվել է 28.02.2019թ. ընթացակարգի հանձնաժողովի նիստի 28.02.2019թ. թիվ 2 արձանագրությունը, որի համաձայն հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Դավթյան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչել Ա/Ձ Ցոլակ Վարդգեսի Գևորգյանին:

Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը ապօրինի որոշում է հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերությունը հայտնել է, որ որակավորման փաստաթղթերը ներկայացնելիս համակարգում առկա են եղել և առ այսօր կան տեխնիկական անսարքություններ, որոնք խոչընդոտել և գործնականում անհնարին են դարձրել Ընկերության կողմից իր պարտականությունների պատշաճ կարգով կատարումը:

Ընկերությունը նշել է, որ համակարգում առկա անսարքությունները և խափանումները հայտնի են եղել նաև հանձնաժողովին և այդ մասին վերջինս նշել է 28.02.2019թ. թիվ 2.1 արձանագրությունում:

Ընկերությունը որպես իրավական հիմնավորում նշել է 2015թ. Հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Պետական գնումների մասին

համաձայնագիր» միջազգային պայմանագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ կետը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը հիշատակված իրավական նորմերի համալիր վերլուծության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ էլեկտրոնային աճուրդը գնում կատարելու էլեկտրոնային եղանակ է, որն իրականացնելիս պատվիրատուն պետք է ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն՝ օգտագործվելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ հասանելի են և փոխգործակցող այլ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ: Միևնույն ժամանակ Պատվիրատուն պետք է պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը:

Ընկերությունը գտնում է, որ որակավորման փաստաթղթերը Ընկերության կողմից պատշաճ կարգով չներկայացնելը պայմանավորված է եղել սույն գնման գործընթացի Պատվիրատուի՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, Համաձայնագրի 4-րդ կետի 3-րդ կետով սահմանված պարտականությունների չկատարման հետևանք:

Ընկերությունը նշել է, որ հանձնաժողովը 28.02.2019թ. թիվ 2.1 արձանագրությամբ կայացրել է որոշում մերժելու Ընկերության հայտը, մերժման հիմքում դնելով հետևյալ հանգամանքը. «Շտկման ժամանակ մասնակիցը չի ապահովել սույն հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.1 կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջը, մասնավորապես բացակայում է պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի /հանձման-ընդունման արձանագրություն և այլն / պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը»:

Ընկերության կողմից նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ընկերությունը գտնում է, որ սույն գնման գործընթացը կազմակերպված չի եղել կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, մասնակիցների միջև մրցակցության խրախուսմամբ, քանի որ բացառապես Ընկերությունն իր կամքից, գործողություններից միևնույն ժամանակ Պատվիրատուի գործողությունների և անգործության արդյունում զրկվել է պատշաճ կերպով շտկում ներկայացնելու իր բացառիկ հնարավորությունից: Ընդ որում շտկումը պատշաճ կարգով ներկայացնելու իրավունքից Ընկերությանը արհեստականորեն զրկելու իր մեղքի բժինն ունի հանձնաժողովի քարտուղար Օրդուխանյանը, ով սխալ ուղղորդելով, իր կարևոր պարտականությունը չկատարելով, մասնավորապես՝ շտկման վերաբերյալ ծանուցմանը չկցելով հանձնաժողովի համապատասխան արձանագրությունը, որում մանրամասն պետք է նկարագրված լինեին գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի արձանագրությամբ կայացված որոշումը չի բխում գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներից, այդ որոշումը ընդունվել է անհամաչափ պայմանների կիրառմամբ, խտրական մոտեցում դրսևորելով և այլ խախտումներով:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք նշել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովը պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը առավել է դասել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր կիրառելի նորմերի կատարման, այդ թվում նվազագույն գնային առաջարկի կարևորագույն սկզբունքից և ըստ էության գնահատել է, որ ակտի պատճենի կամ գրավոր հավաստման վերաբերյալ փաստաթղթի առկայությունը առավել է քան ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցներից 500000 ՀՀ դրամ ավել ծախսերը:

Ընկերությունը նշել է, որ Ընկերությունն ունի թե պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենները, թե տվյալ պայմանագրի

կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը հաստատող փաստաթղթեր և հնարավորություն ունենալու դեպքում կարող է ներկայացնել:

Ընկերության կողմից նշվել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, 11-րդ, 39-րդ և 59-րդ հոդվածները:

Ընկերությունը գտնում է, որ 28.02.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացրած Ընկերության հայտը մերժելու որոշումն ընդունվել է ի թիվս վերը խախտումների, նաև պաշտոնատար անձանց իրավասությունների սահմանազանցման, ՀՀ տնտեսական կարգի, այդ թվում՝ գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և ընդահանուր տնտեսական բարեկեցության, հակամրցակցային համաձայնությունների արգելքի սկզբունքների խախտմամբ:

Ամփոփելով վերոգրյալը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով, Ընկերությունը խնդրել է.

1.«Արգելելու «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի պատվիրատուին կատարելու 28.02.2019թ. թիվ 2.1 արձանագրությունից բխող գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հետագա գործողությունները, այդ թվում՝ Ա/Ձ Ցոլակ Վարդգեսի Գևորգյանի հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելը:

2. Պարտավորեցնելու «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի պատվիրատուին ընդունելու որոշում՝ «Դավթյան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին և կնքելու «Դավթյան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր:

«Դավթյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.03.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և այլն: Խնդիրը ներկայացվել է ինչպես էլեկտրոնային աճուրդի, այնպես էլ էլեկտրոնային մրցույթի համակարգը սպասարկող կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի փետրվարի 22-ի թիվ 01.1/26-1/2727-19 շրջաբերականը և 2019 թվականի մարտի 18-ի թիվ 26/26/4229-19 գրությունը՝ ընթացակարգը չեղարկվում է ընթացակարգի առարկայազուրկ դառնալու պատճառով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.03.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ԳԲՔԱ-ԱՄ-2019/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ԱՄ-2019/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

2. Էլեկտրոնային աճուրդ համակարգի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 07.02.2019թ. ժամը 15:00-ն:

3. Աճուրդին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դավթյան» ՍՊԸ-ն:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դավթյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 28.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ «Դավթյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա թերությունները շտկելու համար վերջինիս ուղարկվել է ծանուցում, սակայն սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) ԷԱՃ համակարգը կասեցրել է կայքի աշխատանքը, որի պատճառով «Դավթյան» ՍՊԸ-ն շտկման փաստաթղթերը ներկայացրել է gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին, համաձայն՝ ՀՀ ՖՆ-ի կողմից տրված շրջաբերականի: 26.02.2019թ. Ընկերությունը gnumner@cadastre.am էլ. փոստին ուղարկել է փաստաթղթերը, սակայն առկա է եղել 2 ֆայլ, 1-ին ֆայլում ներառված է եղել 5 փաստաթուղթ, 2-րդ ֆայլում՝ 7 պայմանագրեր: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ շտկման ժամանակ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով նույն արձանագրության 1.1 կետը՝ մերժել է առաջին տեղը զբաղեցրած

մասնակցի հայտը և առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ Ցոլակ Գևորգյան Վարդգեսի Ա/Ձ-ին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Դավթյան» ՍՊԸ-ի 13.03.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գրությունը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. գրությունը, «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն՝

22. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

24. Արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, «ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Էլեկտրոնային աճուրդի համակարգի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 07.02.2019թ. ժամը 15:00-ն:

Աճուրդին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դավթյան» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դավթյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 28.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ «Դավթյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա թերությունները շտկելու համար վերջինիս ուղարկվել է ծանուցում, սակայն սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) ***ԷԱՃ համակարգը կասեցրել է կայքի աշխատանքը***, որի պատճառով «Դավթյան» ՍՊԸ-ն շտկման փաստաթղթերը ներկայացրել է gnumner@cadastre.am էլեկտրոնային հասցեին, համաձայն՝ ՀՀ ՖՆ-ի կողմից տրված շրջաբերականի: 26.02.2019թ. Ընկերությունը gnumner@cadastre.am էլ. փոստին ուղարկել է փաստաթղթերը, սակայն առկա է եղել 2 ֆայլ, 1-ին ֆայլում ներառված է եղել 5 փաստաթուղթ, 2-րդ ֆայլում՝ 7 պայմանագրեր: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ շտկման ժամանակ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով նույն արձանագրության 1.1 կետը՝ մերժել է առաջին տեղը զբաղեցրած

մասնակցի հայտը և առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ Ցոլակ Գևորգյան Վարդգեսի Ա/Ձ-ին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.02.2019թ. պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով ***մի շարք կազմակերպություններ չեն կարողացել*** մասնակցության հայտ ներկայացնել գնման ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ***ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր*** և այլ: Ծրագրում առաջացած խնդիրների արդյունքում ստեղծվել է ֆորս մաժորային իրավիճակ և հնարավոր չէ ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը:

Վերոհիշյալ գրության 1-ին կետի համաձայն՝ **19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:**

«Դավթյան» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ փորձ է արել համակարգի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթեր, սակայն դա կատարել չի հաջողվել: Միևնույն ժամանակ ենթադրելով, որ հնարավոր պատճառ կարող է հանդիսանալ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերի ծավալուն լինելը Ընկերության կողմից 15.02.2019թ. կամայական փոքրածավալ մի փաստաթուղթ է վերբեռնել համակարգ: Համակարգը նշված փաստաթուղթը ընդունել է, սակայն փոփոխելու հնարավորություն չի տվել:

Բողոքի քննության շրջանակներում «ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն» գնումների հետ կապված բողոքներ քննող անձին գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ, որոնց հետևանքով մի շարք կազմակերպություններ չեն կարողացել մասնակցության հայտ ներկայացնել գնման

ընթացակարգերին, մասնակցել հակադարձ աճուրդներին, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր: Խնդիրը ներկայացվել է ինչպես էլեկտրոնային աճուրդի, այնպես էլ էլեկտրոնային մրցույթի համակարգը սպասարկող կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի փետրվարի 22-ի թիվ 01.1/26-1/2727-19 շրջաբերականը և 2019 թվականի մարտի 18-ի թիվ 26/26/4229-19 գրությունը՝ ընթացակարգը չեղարկվում է ընթացակարգի առարկայազուրկ դառնալու պատճառով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Ուսումնասիրելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացքն, արձանագրում եմ, որ աճուրդի մասնակից «Դավթյան» ՍՊԸ-ն ի սկզբանե eauction համակարգի չաշխատելու հետևանքով զրկված է եղել Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով, արձանագրում եմ, որ eauction համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով խախտվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով սահմանված պահանջների պահպանմամբ անցկացնելու և իրականացնելու ընթացքն, որի արդյունքում «Դավթյան» ՍՊԸ-ն զրկվել է Կարգի 23-րդ կետի համաձայն՝ շտկելու հնարավորությունից:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.02.2019թ. պատվիրատուներին ուղղված շրջաբերականով հայտնել է, որ 11.02.2019թ.

ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում ***առկա տեխնիկական խնդիրների պատճառով*** 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ ***հայտարարել չեղյալ***:

Այսպիսով, հաշվի առնելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու, միաժամանակ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացնելու անհրաժեշտությունը և հիմք ընդունելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի պահանջները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. շրջաբերականը, գտնում եմ, որ «Դավթյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Դավթյան» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին, այն է՝ պարտավորեցնել «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի պատվիրատուին ընդունելու որոշում՝ «Դավթյան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին և կնքելու «Դավթյան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով,

առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Հաշվի առնելով վերը նշված հոդվածների դրույթները, գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Դավթյան» ՍՊԸ-ի կողմից 13.03.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին աճուրդը հայտարարել չկայացած:

2. Բողոքի պահանջը՝ «Դավթյան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ